Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 18.11.2021Թ. N 1902-Լ ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 2024Թ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ)

Վարչապետի աշխատակազմ					
ծրագրի հերթական համարը	նպատակը	միջոցառումների անվանումները	միջոցառումների իրականացման արդյունքները	միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	ծանոթագրություն
1	2	3	4	5	6
1	Քաղաքականությունների մշակման գործընթացում հանրային մասնակցության ապահովման գործիքակազմի բարելավում	1.1 Մասնակցային կառավարման խնդիրների վերհանում և միջազգային փորձի ուսումնասիրում և ինստիտուցիոնալ մեխանիզմի ձևավորում:	1. Իրականացվել են մի շարք ուսումնասիրություններ և հետազոտություններ՝ այդ թվում միջազգային փորձի, որոնց արդյունքում վերհանվել և գույքագրվել են մի շարք խնդիրներ՝ ուղղված ՀՀ կառավարության մասնակցային կառավարման գործընթացներին: Հետազոտությունները և միջազգային փորձի ուսումնասիրումը իրականացվել է ՀՀ և միջազգային գործընկերների (քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպություններ) հետ համագործակցության արդյունքում: Մանավորապես՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության և «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն» (ECNL) հիմնադրամի կողմից մշակվել է «ՔՀԿ չափիչ Հայաստան» 2023թ. և 2024թ. զեկույցները:		

			• Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ), Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության և ԿԶՆ-Լեբ հետ համագործակցության արդյունքում մշակվել է «Հայաստանի կարողությունները նորարար և մասնակցային քաղաքականությունների մշակման գործընթացներում»: • ԱՄՆ ՄԶԳ «Գործուն քաղաքացիական հասարակություն ծրագիր» շրջանակներում իրականացվել է «ՀՀ նախարարին կից հասարակական խուրհրդի աշխատակարգի վերաբերյալ» ուսումնասիրություն: • Իրականացվել են այցեր Ֆրանսիային և Ֆինլանդիայի կառավարություններ՝ ուսումնասիրելու այդ երկրների փորձը քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման գործընթացներում հանրային մասնակցության և ներգրավման, մեխանիզմներ և լուծումների ուղղությամբ: 2. 2024թ. դեկտեմբերի 26-ի ՀՀ վարչապետի թիվ 1204-Լ որոշմամբ սահմանվել է մասնակցային կառավարման գործընթացին աջակցող և գործընթացը բարելավող ինստիտուցիոնալ մեխանիզմի ստեղծումը և գործառույթների սահմանումը: Մասնավորապես՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի կառուցվածքում իրականացվել է փոփոխություն և սահմանվել «Մասնակցային և բաց կառավարման» հարցերի վարչության ձևավորումը:		
2	Կառավարության ռազմավարական հաղորդակցության	2.1 Ռազմավարական հաղորդակցության կառավարման ֆունկցիոնալ	Մշակվել է Ռազմավարական հաղորդակցության կառավարման ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ ճարտարապետության մոդելը և քննարկվել է բոլոր		

	միասնական համակարգի ներդնում	և ինստիտուցիոնալ ճարտարապետության ձևավորում	շահագրգիռ կողմերի հետ: Մշակվել է իրականացման անցումային (տրանզիցիոն) պլանը և ներկայացվել է համաձայնեցման:		
		2.2 Ռազմավարական հաղորդակցության հաղորդակարգերի մշակում և ներդրում	Մշակվել են «ստանդարտ» և «ճգնաժամային» իրավիճակների հաղորդակարգերը: Դրանք գտնվում են փորձարկման և լավարկման փուլում:		
		2.3 Ռազմավարական հաղորդակցության ոլորտում պետական հատվածի կարողությունների հզորացում	Իրականացվել է 3 դասընթաց պետական կառավարման համակարգի մարմինների խոսնակների համար:		
4	Վարչարարության ընթացակարգերի պարզեցում և պատասխանատվությա ն միջոցների հստակեցում	4.1 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում կառավարության հաստատմանը	Ընդունվել է *«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-343-Ն օրենքը,* որի արդյունքում տեսչական մարմինները հնարավորություն են ստացել լիարժեքորեն իրականացնել իրենց վերապահված գործառույթները՝ ապահովելով վերահսկողության համապատասխան ոլորտներում անվտանգությունն ու օրենսդրության պահանջների պահպանումը: -Միավոր վարչարարության վրա ծախսվող մարդկային և ֆինանսական ռեսուրսները նվազել են – Ապահովված է իրավախախտման համար կիրառվող պատասխանատվության միջոցների համադրելիությունը դրա նշանակության հետ – Կրկնախախտումները նվազել են:		
5	Անվտանգության մակարդակի բարձրացմանը միտված, պլանավորված և ըստ	5.1 «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և	Մշակվել, շրջանառվել և 11. 12. 2024 թ. Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման		

	ռիսկի թիրախավորված հստակ ընթացակարգերով ստուգումներ	անցկացման» մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում կառավարության հաստատմանը	մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Շուկայի վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Հրդեհային անվտանգության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու մասին օրենքների նախագծերը, որոնց նպատակն է տեսչական մարմինների կողմից պատշաճ վերահսկողության, այդ թվում՝ ստուգման իրականացման իրավական հիմքերի կատարելագործումը, առկա օրենսդրական բացերի վերացումը, ստուգումների վերաբերյալ ծանուցման ընթացակարգերի հստակեցումը, ստուգումների կազմակերպման և անցկացմանն առնչվող իրավակարգավորումների հստակեցումն ու պարզեցումը:		
6	Սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների վերահսկողության	6.1 «Անասնաբուժության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում	Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ		

	կանոնակարգում և հստակեցում	կառավարության հաստատմանը	կատարելու մասին», «Կերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բուսասանիտարիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Անասնաբուժության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որով թույլտվական գործընթացները տեսչական մարմնից փոխանցվում են լիազոր մարմնին:		
		6.2 «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում կառավարության հաստատմանը			
		6.3 «Բուսասանիտարիայի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում կառավարության հաստատմանը			
		6.4 «Կերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի – 2024 թ. փետրվարի 1-ին տասնօրյակ Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում ներկայացում կառավարության հաստատմանը			
		6.5 «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության» մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի			

		ներկայացում կառավարության հաստատմանը			

Փոխվարչապետ Մ. Գրիգորյանի գրասենյակ					
NN	Նպատակ	Միջոցառումներ	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6
2	Ռազմավարական պլանավորման և քաղաքականության մշակման համակարգի արդիականացում	2.1 Ռազմավարական պլանավորման շրջանակի ու մեթոդաբանության վերանայում, ներառյալ՝ ձևաչափերի ու ուղեցույցների մշակում	Վերանայվել է երկրի ռազմավարական պլանավորան շրջանակն ու մեթոդաբանությունը: Մշակվել է Կառավության ռազմավարական կառավարման աշխատակարգը, որը ներկայացնում է երկրի հիմնական ռազմավարությունները ու դրանց մշակման և մոնիթորինգի տրամաբանությունն ու ընթացակարգերը: Մեթոդաբանությունը մշակվել է Հայաստանի զարգացման գործընկերների հետ համագործակցությամբ: Նախագիծը շրջանառվել է սահմանված կարգով և ներկայացվել է հանրային քննարկման:		

3	Հանրությանը մատուցվող ծառայությունների արդիականացում	3.3 Հայաստանի ծառայությունների ազգային թվային հարթակի գործարկում	Հանրային ծառայությունների թվայնացման, դրանց առցանց միասնական մուտքից հասանելիության ապահովման նպատակով գործարկվել է Ծառայությունների միասնական հարթակը (https://hartak.am): Շարունակվել են աշխատանքները կյանքի 12 իրադարձության (life events) թվայնացման համակարգաստեղծ նախագծի մասով:		
		3.4 Ծառայությունների թվային ճարտարապետության իրավական հիմքերի սահմանում, այդ թվում՝ «միայն մեկ անգամ», «թվային ըստ նախագծման», «առաջնահերթ թվային» սկզբունքների, բաց տվյալների քաղաքականության ու ծառայությունների մատուցման ստանդարտների, ներառյալ՝ ծառայությունների մշտադիտարկման ու գնահատման մեթոդաբանության իրավական ամրագրում	Իրականացվել է հանրային ծառայությունների բիզնես գործընթացների խորքային վերլուծություն: Աշխատանքներ են իրականացվել հանրային ծառայությունների թվայնացման սկզբունքների ներդրման ուղղությամբ (http://standards.hightech.gov.am): Մշակվել են «Հանրային տեղեկությունների մասին», «Բնակչության պետական ռեգիստրի մասին», «Կիբեռանվտանգության մասին» և «Թվային հավաստագրման, նույնականացման և ստորագրության մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնցով կսահմանվեն Թվային ճարտարապետության իրավական հիմքերը:		

Փոխվարչապետ Տ. Խաչատրյանի գրասենյակ					
ծրագրի հերթական համարը	նպատակը	միջոցառումների անվանումները	միջոցառումների իրականացման արդյունքները	միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	ծանոթագրություն
1	2	3	4	5	6
1	Գործադիր իշխանության մարմինների ինստիտուցիոնալ արդյունավետության բարձրացում	1.1.Պետական կառավարման համակարգի մարմինների գործառութային վերլուծության մեթոդաբանության մշակում	Պետական կառավարման համակարգի մարմինների գործառութային վերլուծության մեթոդաբանության առաջարկվող տարբերակը մշակված է: Ընթացքի մեջ է գտնվում կառավարման մարմինների համար կարճաժամկետ առաջնահերթ անելիքների սահմանումը՝ մինչեւ ռազմավարությունների ամբողջականացումը: Սա հիմք կհանդիսանա 2025թ. կատարողականի 2 կիսամյակային գնահատումների համար՝ մարմինների ղեկավար կազմի վարձատրության պիլոտային մեխանիզմի ներդրման և սահմանված առաջնահերթություններից ելնելով ֆունկցիոնալ վերանայումների շրջանակի հստակեցման նպատակով:		
		1.2. Պետական կառավարման համակարգի մարմինների գույքագրում և կազմակերպական տիպի որոշման միասնական մեթոդաբանության մշակում	Պետական կառավարման համակարգի մարմինների կազմակերպական տիպի որոշման միասնական մեթոդաբանությունը մշակված է, ֆունկցիոնալ վերանայումների գործընթացին զուգահեռ իրականացվելու է դրա լավարկման և վերջնականացման գործընթացը: Պետական կառավարման համակարգի մարմինները գույքագրված և դասակարգված են՝ համաձայն առաջարկվող տիպաբանության:		

2	Հանրային ծառայության մրցունակության բարձրացում	2.3 Պետական հատվածում ոչ ֆինանսական շահադրդման համակարգի լավարկում	Պետական համակարգի աշխատողների հորիզոնական և ուղղահայաց շարժունության ընթացակարգերի բարելավման շրջանակներում «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-475-Ն օրենքով սահմանվել է կատարողականի արդյունքներով պաշտոնի նշանակման կառուցակարգ, որը վերաբերվում է կատարողականի գնահատման արդյունքներով քաղաքացիական ծառայողի առաջխաղացման հնարավորության ապահովմանը՝ միտված լինելով համալրման և ընտրության գործընթացների բարեփոխմանը: Վերոգրյալ փոփոխությամբ պայմանավորված՝ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին իրավունք է վերապահվել քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում օրենքով սահմանված պահանջներին բավարարող քաղաքացիական ծառայողին նշանակելու ավելի բարձր թափուր պաշտոնի: Նույն օրենքով ընդլայնվել է ներքին մրցույթին մասնակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակը՝ ներառելով նաև տվյալ մարմնի այլ պետական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված հանրային ծառայողներին, որոնց կադրերի ռեզերվի վարումն իրականացվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով: Հանրային ծառայության համակարգում անձնակազմի հավաքագրման և համալրման կարգավորումների բարելավման շրջանակներում նույն օրենքով ամբողջությամբ վերանայվել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն		

			զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը: Օրենքի 10-րդ հոդվածը (Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը) շարադրվել է նոր խմբագրությամբ: Մասնավորապես, Օրենքով սահմանված դեպքերում համապատասխան մարմնին հնարավորություն է տրվել մրցույթը հայտարարել մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալը, որի նպատակն է ըստ անհրաժեշտության ապահովել տվյալ պաշտոնի արագ համալրումը, նվազեցնել որոշակի ժամանակահատվածում պաշտոնը չհամալրելու ռիսկերը և ապահովել աշխատանքի շարունակական գործընթացը: Ներքին մրցույթն անցկացնելու համար նախատեսվել է միայն հարցազրույցի փուլ: Ընդլայնվել է ներքին մրցույթին մասնակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Վերանայվել են Օրենքով թեստային առաջադրանքների բովանդակությանը վերաբերող իրավական կարգավորումները: Կոմպետենցիաները թեստային առաջադրանքների միջոցով ստուգելու վերաբերյալ իրավական կարգավորումը հանվել է և նախատեսվել է կոմպետենցիաների ստուգումը հարցազրույցի փուլում: Հարցազրույցի փուլի միակ հաղթող ճանաչված անձի կողմից դիմում չներկայացնելու դեպքում նախատեսվել են իրավական մեխանիզմներ հարցազրույցի փուլը հաղթահարած երկրորդ մասնակցի ընտրության և նշանակման համար. նպատակն է՝ խնայել ժամանակը, ռեսուրսները, բարձրացնել մրցույթների արդյունավետությունը և համակարգի գրավչությունը: Վերանայվել են նաև տարբեր գործընթացների հետ կապված ժամկետները: Փոփոխություններ են կատարվել նաև Օրենքի 11-րդ		

			հոդվածում (Վարկանիշային ցուցակների կազմումը և վարկանիշային ցուցակներից պաշտոն զբաղեցնելը): Վարկանիշային ցուցակում գրանցված թեկնածուն հանվում է վարկանիշային ցուցակից, եթե վարկանիշային ցուցակում գրանցվելուց հետո նշանակվել է հանրային ծառայության պաշտոնի կամ դիմում է ներկայացրել իրեն վարկանիշային ցուցակից հանելու համար, ինչը հնարավորություն է տալիս իրատեսորեն գնահատել վարկանիշային ցուցակում գրանցված անձանց հնարավորությունները և ապահովել վարկանիշային ցուցակից հարցազրույցի փուլի մասնակցության ավելի լայն հնարավորություններ: 2024 թվականին մայիսին Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից ԿԳՄՍ նախարարության, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի, մի շարք ԲՈՒՀ-երի ներկայացուցչիչների հետ կայացած հանդիպման արդյունքներով վերոնշյալ օրենքում նախատեսվեց նաև փորձնակի ինստիտուտի բարեփոխման իրավական հիմք: Պետական մարմիններում անձնակազմի վերապատրաստումների շրջանակներում «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-475-Ն օրենքով միջազգային լավագույն փորձի հիման վրա քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացի մասով առաջարկվել են նոր լուծումներ և մոտեցումներ: Մասնավորապես, Թվինինգ ծրագրի 4.1 և 4.2 բաղադրիչների շրջանակում		

			համապատասխան մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումների կողմից որպես խնդիր մատնանշվել է մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումների կազմակերպման դժվարությունները, երբ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումները չեն կազմակերպվել հայտարարված մրցույթների չկայանալու պատճառով, ինչը պայմանավորված է թե՛ վերապատրաստվողների փոքր թվով, թե՛ վերապատրաստման համար առաջարկվող գումարի չափով: Վերոգրյալով պայմանավորված՝ նախատեսվել է, որ Քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպում է ոչ միայն կոմպետենցիաների, այլ նաև համապատասխան մարմինների աջակցող կառուցվածքային ստորաբաժանումների համանման (նույնաբովանդակ) գործառույթներ իրականացնող քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումները: Նախատեսվել է քաղաքացիական ծառայողի վերապատրաստման իրավունքի իրացման ևս մեկ հնարավորություն, համաձայն որի՝ քաղաքացիական ծառայողն իրավունք է ստանում վերապատրաստվելու իր զբաղեցրած պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների և համապատասխան մարմնի գերակա խնդիրների արդյունավետ լուծմանն ուղղված վերապատրաստման դասընթացներին՝ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համաձայնությամբ: Նշված նորմի նախատեսումը հնարավորություն է տալիս ընդլայնելու քաղաքացիական ծառայողների		

			վերապատաստման և շարունակական զարգացման հնարավորությունները իբրև իրավունք իրացնելու կառուցակարգերը:		